«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունիսի 2017 թվականի

«**Միջազգային գործունեության վիճակը և խնդիրները**» **հարցի մասին**

Լսելով և քննարկելով գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Գագիկ Վարդանյանի** «**Միջազգային գործունեության վիճակը և խնդիրները**» զեկուցումը՝

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը վերջին տարիների ընթացքում զգալի ձեռքբերումներ է արձանագրել միջազգային գործունեության բնագավառում:

Շարունակվել են աշխատանքները համաշխարհային կրթական տարածքին համալսարանի միասնացման, կրթական կենտրոնների և հիմնադրամների հետ համագործակցության զարգացման ուղղությամբ: Իրականացվել են Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող՝ «e-drone», «Մարդկային գործոնի միջոցով կրթական հաստատությունների առաջխաղացում (PEOPLE)», «Հայաստանի բուհերի որակի ապահովման գործընթացներում ուսանողների մասնակցության ընդլայնում (ESPAQ)», «Զբոսաշրջության ոլորտի կառավարման և գեոինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառման միջմասնագիտական ծրագրային բարեփոխումներ (HERITAG)» ծրագրերը: 2016-2017 ուսումնական տարվա ընթացքում Եվրոպական հանձնաժողովի և միջազգային այլ կառույցների կողմից ֆինանսավորվող ծրագրերին ներկայացվել է 12 հայտադիմում:

2016-2017 ուսումնական տարում ընդլայնվել են ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունության շրջանակները, ի հավելումն արդեն առկա գործընկերների՝ համալսարանը ձեռք է բերել նոր գործընկերներ: Ներկայում համալսարանը գործակցում է շուրջ 30 արտասահմանյան համալսարանների հետ: 2016-2017 թթ. ՀՊՏՀ-ից արտասահմանյան համալսարաններ են մեկնել 20 ուսանող, 26 վարչական ու դասախոսական աշխատակազմի ներկայացուցիչ և ժամանել՝ 2 ուսանող, 59 դասախոս և վարչական աշխատակից:

Աշխատանքներ են իրականացվել Հնդկաստանի Հանրապետությունում՝ դիմորդների ներգրավման նպատակով: 2016-2017 ուսումնական տարվա ընթացքում ՀՊՏՀ-ն տվել է 8 օտարերկրյա շրջանավարտ. 7-ը՝ Հնդկաստանից, 1-ը՝ Սիրիայից: ՀՊՏՀ ասպիրանտուրա է ընդունվել 1 դիմորդ Սիրիայից:

Նախապատրաստվել են համապատասխան փաստաթղթերի փաթեթներ Հնդկաստանի Հանրապետությունում, Սիրիայի Արաբական Հանրապետությունում և

Իրանի Իսլամական Հանրապետությունում ՀՀ դեսպանատների աջակցությամբ ՀՊՏՀ դիպլոմերի փոխճանաչման գործընթաց սկսելու նպատակով:

Հետազոտական ծառայությունների արտահանման և համապատասխան միջոցների ներգրավման ոլորտում ևս առկա է դրական տեղաշարժ: «Ամբերդ» հետազոտական կենտրոնի, միջազգային տնտեսական հարաբերությունների, հակաճգնաժամային և զբոսաշրջային կառավարման ամբիոնների համատեղ ջանքերով 2-ական հետազոտական դրամաշնորհային հայտ է ներկայացվել:

Միջազգային վարկանշի ձևավորման նպատակով համալսարանի վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն է տրամադրվել, թարմացվել են միջազգային վարկանշավորման աղյուսակները, մասնավորապես՝ www.webometrics.info/, www.topuniversities.com/, www.4icu.org/: 2016-2017 ուսումնական տարվա ընթացքում ՀՊՏՀ-ի վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվական թերթիկներ են պատրաստվել և ուղարկվել բոլոր միջազգային գործընկերներին: Համալսարանը ներկայացվել է մի շարք գործընկեր բուհերի կողմից կազմակերպված կրթության ցուցահանդեսներում: Մասնավորապես՝ ռեկտոր Կորյուն Աթոյանի գլխավորությամբ համալսարանի պատվիրակությունը մասնակցել է Հնդկաստանում կազմակերպված ամենամյա FICCI-ի բարձրագույն կրթության ցուցահանդեսին:

ՀՊՏՀ միջազգայնացման և միջազգային համագործակցության զարգացման ուղղությամբ արդյունավետ են աշխատել արտաքին կապերի և որակի բաժինները:

Գիտական խորհուրդը միաժամանակ արձանագրում է՝ բնագավառը բնութագրող հիմնական ցուցանիշները դեռևս ցածր մակարդակում են, առկա են մի շարք խնդիրներ.

1. Համակարգված չէ տարբեր ուղղություններով միջազգային գործունեություն իրականացնող ստորաբաժանումների աշխատանքը, ինչը որոշակի խոչընդոտներ է ստեղծում համալսարանի միջազգայնացման առումով:
2. Ցածր է ակադեմիական փոխանակումների և միջազգային այլ ծրագրերում համալսարանի պրոֆեսորադասախոսական համակազմի ներգրավվածության մակարդակը: Ակադեմիական փոխանակման գործընթացի լիարժեք իրականացման համար դեռևս լուրջ խնդիր է մնում օտար լեզվի իմացության ոչ բավարար մակարդակը, որի պատճառով հիմնականում դասախոսական և վարչական աշխատակիցների հայտադիմումները բավարարվում են գրեթե առանց մրցույթի:
3. Համալսարանի դասախոսների և վարչական աշխատողների՝ օտար լեզուների պատրաստվածության անբավարար մակարդակը դառնում է ոչ միայն միջազգային շփումների զարգացումը խոչընդոտող գործոն, այլև նվազեցնում է համալսարանի գրավչությունն արտասահմանցի ուսանողների համար:
4. Համալսարանի ստորաբաժանումները բավարար արդյունավետությամբ չեն օգտագործում արտասահմանցի գիտնականների հետ համատեղ գիտական հետազոտությունների կատարման հնարավորությունը:

5. Համալսարանում սովորող օտարերկրյա ուսանողների թիվը դեռևս գոհացնող չէ. ցածր է միջազգային ոլորտում ընդունված միջին՝ 4-5% ցուցանիշից: 2017-2018 ուսումնական տարում, չնայած ձեռնարկված միջոցառումներին, քիչ հավանական է, որ համալսարանը կունենա օտարերկրյա դիմորդներ:
6. 2017 թվականին, ինչպես և 2016 թ., «Էրասմուս+» ծրագրի շրջանակներում, եվրոպական համալսարաններում ՀՊՏՀ բակալավրիատի ուսանողների ուսումնառությունը կազմակերպելու ընթացքում բացահայտվեցին կրթական ծրագրերի անհամադրելիության և 2-րդ, 3-րդ կուրսերում ուսումնական պլաններով նախատեսված մի շարք առարկաների դասավանդման հիմքերի բացակայության փաստեր:
7. Ցածր մակարդակի վրա է օտարերկրացի դասախոսների դասախոսություններին համալսարանի դասախոսների և ուսանողների մասնակցությունը:

Վերոնշյալի հիման վրա

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇՈՒՄ Է

Համալսարանի միջազգային գործունեության վերաբերյալ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Գագիկ Վարդանյանի** զեկուցումն ընդունել ի գիտություն: Համալսարանի միջազգային գործունեության բնագավառում ձեռքբերումներն ամրապնդելու և առկա խնդիրները լուծելու նպատակով հանձնարարել՝

1. **Արտաքին կապերի և որակի բաժնին՝**
   - ակտիվացնել օտարերկրյա դիմորդների ներգրավման աշխատանքը,
   - «Էրասմուս+» ծրագրի շրջանակներում ընդլայնել համագործակցության շրջանակները,
   - ակտիվացնել ամերիկյան և չինական համալսարանների հետ գործընկերային հարաբերությունների հաստատման աշխատանքը,
   - շարունակել գործունեությունն առաջատար արտասահմանյան բուհերի հետ կրկնակի դիպլոմների մագիստրոսական ծրագրեր իրականացնելու ուղղությամբ,
   - ապահովել համալսարանի մասնակցությամբ միջազգային դրամաշնորհային խոշոր նախագծերի արդյունավետ իրականացումը:

2. **Ուսումնական բաժնին՝**
   - ապահովել բակալավրիատի և մագիստրատուրայի ծրագրերի միջազգայնացումը,
   - ներկայացնել առաջարկություն մագիստրատուրայում որոշ առարկաներ անգլերենով դասավանդելու հնարավորության վերաբերյալ,

– ապահովել համալսարանի դասախոսների և վարչական աշխատակիցների համար կազմակերպվող անգլերենի դասընթացների շարունակականությունը,
– ռեկտորատի քննարկմանը ներկայացնել մագիստրոսական ծրագրերում առանձին առարկաների դասավանդումն օտար լեզուներով կազմակերպելու հարցը:

3. **Մասնագիտական ամբիոններին՝**
– ակտիվացնել մասնակցությունը միազգայնացման գործընթացներին,
– ապահովել կրթական և առարկայական ծրագրերի՝ առաջավոր արտասահմանյան համալսարանների ծրագրերի հետ համապատասխանությունը,
– ապահովել ակադեմիական փոխանակության ծրագրերով արտասահմանյան համալսարաններում դասավանդած կամ հետազոտություններ իրականացրած մասնագետների փորձի տարածումը ամբիոնի աշխատողների շրջանում,
– ապահովել ամբիոնների աշխատողների ակտիվ մասնակցությունը հրավիրված դասախոսների դասախոսություններին,
– ըստ մասնագիտացման՝ համալսարանում հյուրընկալվող արտասահմանյան համալսարանների դասախոսների հետ հաստատել սերտ և տևական կապեր՝ համատեղ հետազոտությունների իրականացման, համահեղինակությամբ հոդվածներն արտասահմանում կամ Հայաստանում հրատարակելու նպատակով:

4. **Դեկաններին՝**
– ֆակուլտետի խորհրդի նիստերում պարբերաբար քննարկել ամբիոններում և ֆակուլտետում միջազգայնացմանը վերաբերող հարցեր,
– ապահովել ուսանողների ակտիվ մասնակցությունն արտասահմանից ժամանած դասախոսների դասախոսություններին,
– ակտիվացնել ֆակուլտետի ուսանողների և դասախոսների մասնակցությունը ակադեմիական շարժունության ծրագրերին:

5. **Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Գ.Ի.Վարդանյանին և ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյանին:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

07.06.2017 թ.